ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/109

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.03.2022թ. թիվ 26/26-1/5004-2022 գրությամբ «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 18.03.2022թ. թիվ 1.2/1291-2022 գրության հիման վրա, 24.03.2022թ. թիվ 26/26-1/5004-2022 գրությամբ նախաձեռնել է «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ն 28.03.2022թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտը լրացվել է Հավելված N 1 Արդարադատության նախարարի 2021 թվկանաի օգոստոսի 30-ի N 416-Ն հրամանի համաձայն: Կից ներկայացնում եմ լրացված և ստորագրված ֆայլը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/109 ընթացակարգի շրջանակներում 29.03.2022թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.03.2022թ. թիվ 1.2/1291-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Կից ներկայացնում ենք ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/11 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի մասնակից «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ի հայտի մերժման վերաբերյալ հիմնավորումը՝ կից հիմքերով:

Հիմնավորում

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, LED լամպերի ձեռքբերման նպատակով, հայտարարել է ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/11 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել է 02.03.2022 թվականին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, 5-րդ չափաբաժնով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից): Աճուրդն ամփոփվել է 10.03.2022 թվականին և eauction.armeps.am համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ կողմից «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ն համարվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը տեղի է ունեցել 11.03.2022 թվականին:

Հանձնաժողովն, ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը (հայտում առկա փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը) արձանագրել է, որ հայտում առկա են մի շարք անհամապատասխանություններ, այդ թվում նաև՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում՝ /Հավելված 1.2/ Հավելված 1.2-ը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/11 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ որոշել է 11.03.2022թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է (…):

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ, սահմանված ժամկետում շտկումները կատարել է մասնակի, մասնավորապես՝ Մասնակցին ծանուցվել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ Հավելված 1.2-ը հաստատելու մասին, սակայն Մասնակցի կողմից չի կատարվել Իրական շահառուների վերաբերյալ Հայտարարագրի լրացման կարգի 7-րդ կետի պահանջը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել վերջինիս հայտը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը որոշել է՝ Ընթացակարգի 5-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով՝ Ձեզ ենք տրամադրում «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/109 ընթացակարգի շրջանակներում 29.03.2022թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/109 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/109 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից LED լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության հայտով ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում /Հավելված 1.2/ առկա է անհամապատասխանություն, այն է՝ 4.1 Անձի ինքնությունը հավաստող տվյալները

ենթաբաժնի 4.1.5 կետը ենթակա է շտկման (անհրաժեշտ է նշել ՀՀ): 4.3 Անձի հաշվառման հասցեն ենթաբաժնի 4.3.2 և 4.3.3 կետերը ենթակա են շտկման (անհրաժեշտ է համայնքը նշել Երևան, իսկ վարչատարածքային միավորը՝ Արաբկիր): 4.4 Անձի բնակության հասցեն ենթաբաժնի 4.4.2 և 4.4.3 կետերը ենթակա են շտկման (անհրաժեշտ է համայնքը նշել Երևան, իսկ վարչատարածքային միավորը՝ ըստ վարչական շրջանի): Հավելված 1.2-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- Eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Արտադրողի անվանումը» սյունակում արտադրող կազմակերպության կազմակերպաիրավական ձևը ենթակա է շտկման, անհրաժեշտ է հստակ նշել արտադրող ընկերության կազմակերպաիրավական ձևը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Նույն արձանագրության համաձայն՝ 15.03.2022թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ի կողմից շտկումը չի կատարվել, այն է՝ հայտով ներկայացված հավելված 1.2-ը հաստատված չէ թվային ստորագրությամբ և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.03.2022թ. թիվ 26/26-1/5004-2022 գրությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 18.03.2022թ. թիվ 1.2/1291-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ <u>գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է</u> պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ <u>գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,</u>

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում ***Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան): Ընդ որում՝ 1.2 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ կամ այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.19-րդ կետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը իր կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում և ներկայացնում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Այն դեպքում երբ, մասնակիցը ներկայացնում է իր կողմից չհաստատվող տեղեկություն, ապա փաստաթղթերն ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակով:

<u>Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են</u>

էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակով:

Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից LED լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել

է, որ Ընկերության հայտով ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում /Հավելված 1.2/ առկա է անհամապատասխանություն, այն է՝ 4.1 Անձի ինքնությունը հավաստող տվյալները ենթաբաժնի 4.1.5 կետը ենթակա է շտկման (անհրաժեշտ է նշել ՀՀ): 4.3 Անձի հաշվառման հասցեն ենթաբաժնի 4.3.2 և 4.3.3 կետերը ենթակա են շտկման (անհրաժեշտ է համայնքը նշել Երևան, իսկ վարչատարածքային միավորը՝ Արաբկիր): 4.4 Անձի բնակության հասցեն ենթաբաժնի 4.4.2 և 4.4.3 կետերը ենթակա են շտկման (անհրաժեշտ է համայնքը նշել Երևան, իսկ վարչատարածքային միավորը՝ ըստ վարչական շրջանի): Հավելված 1.2-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
- Eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Արտադրողի անվանումը» սյունակում արտադրող կազմակերպության կազմակերպաիրավական ձևը ենթակա է շտկման, անհրաժեշտ է հստակ նշել արտադրող ընկերության կազմակերպաիրավական ձևը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ 15.03.2022թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ի կողմից շտկումը չի կատարվել, այն է՝ հայտով ներկայացված հավելված 1.2-ը հաստատված չէ թվային ստորագրությամբ և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ, արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը» հաստատված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որպիսի պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.03.2022թ. թիվ 26/26-1/5004-2022 գրությամբ «ԱՐՓԻ ԼԵԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**